

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Կատարողական վարույթը կասեցնելու մասին

06.09.2021թ.

ք. Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայր Հասմիկ Ալեքսանյանս ուսումնասիրելով թիվ 04868355 կատարողական վարույթի նյութերը

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 13.08.2020թ. փրված թիվ ԵԴ/28541/02/18 կատարողական թերթի համաձայն Աշուր Միքայելյանից հոգուր <<Կոնվերսանկ>> ՓԲ ընկերության բռնագանձել 1.460.677 ՀՀ դրամ:

Պարտապանից պետք է բռնագանձել նաև բռնագանձման գումարի 5 տոկոսը, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Պահանջատերը գրությամբ հայտնել է, որ պարտավորությունը 16.08.2021թ դրությամբ կազմում է 3.442.422 ՀՀ դրամ:

Կատարողական գործողությունների արդյունքում պարզվել է, որ պարտապան Աշուր Խաչատուրի Միքայելյանի անվամբ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների բաժնում հարուցված են այլ կատարողական վարույթներ, որը վերջինիս պարտավորության չափը գերազանցում է նվազագույն աշխատավարձի երկու հազարապատիկը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1 հոդվածներով և 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կասեցնել թիվ 04868355 կատարողական վարույթը 90-օրյա ժամկետով:

Առաջարկել պահանջատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան.

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում.

Որոշման պատճենն ուղարկել կողմերին.

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան կամ վերադատության կարգով՝ որոշումը ստանալու երկամսյա ժամկետում կամ օրենքով սահմանված ժամկետներում:

ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՈՐ՝

ՀԱՍՄԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ